«մեծ ազգերը» — մեծ՝ թուով միայն — այդ «լուսաւոր եւ ամենայառաջադէմ ժողովուրդները» Եւրոպայի ու Ամերիկայի, նրանցից սպասելով իրենց ազատութիւնը: Եւ այսօր, շատ ցնորքների հետ միասին, ահա այդ ցնորքն եւս փչրւում է· այն ցնորքը, որ ազգային–մշակութային ինքնավարութիւնը եւս այդ ազգերի յաղթանակի հետ է կապուած եղել: Ազգեր, որոնք այդ ինքնավարութեան գոյութիւնն անգամ չեն ճանաչում իրենց փոքրամասնութեանց համար: Ու՝ փոքրիկ Էսթոնիան է այսօր ռահվիրան այդ հարցում:

III

Դառնանք Խորհրդային եւ մասնաւորապէս անդրկովկասեան իրականութեան: Ցատկապէս նկատի առնենք հայ փոքրամասնութեանց մշակութային ինքնավարութեան խնդիրը:

Թուական դրութիւնը ծանօթ է մեզ: Գիտենք նաեւ, որ Անդրկովկասի ամէն մի հանրապետութիւն, ինչպէս նաեւ ինքնավար շրջան, «պետական» ազգի մշակութային ինքնավարութիւն իրականացնում է ի թիւս միւս գործառնութեանց: Իսկ ո՞րն է, կա՞յ արդեօք մշակութային ինքնավարութիւն, ազգային փոքրամասնութեանց համար:

Խորհրդային Մոսկուան ի լուր աշխարհի տարածում է, թէ հիմքից լուծել է ազգային հարցը: Ո՞րչափ է դա համապատասխանում իրականութեան:

Նախ՝ ինչպէս բոլշեւիկները, այնպէս նաեւ ուրիշ շատերը մոռանում են նման պնդումներ անելիս, որ նրանք իշխանութիւնը չեն խլել ցարիզմից, այլ՝ ժամանակաւոր յեղափոխական կառավարութիւնից, որ՝ Խորհրդային վարչաձեւը չի եկել ու փոխարինել ցարականը, այլ՝ դեմոկրատականը: Իսկ վերջինս էր գոյութեան սկզբից իսկ Ռուսաստանի բաղադրիչ երկրամասերի ինքնավարութիւնը ճանաչել եւ ընդունել է:

Բոլշեւիկների ձեռքով գրուած Սահմանադիր Ժողովը յայտնի է, Ռուսաստանը հրուչակեց դաշնակցային (ֆեդերատիվ) պետութիւն: Ասել է՝ բոլշեւիզմը տապալեց ոչ թէ ցարիզմը, այլ տեմոկրատիզմը, դեմոկրատիկ–դաշնակցային կարգի տեղ ի կեանս կոչելով խորհրդային – դաշնակցային կարգ: Զխօսենք վերջինիս էութեան, մէկի կամ միւսի առաւելութեան մասին, այլ հաստատենք փաստը միայն, որ շատ յաճախ է մոռացւում եւ ստացւում: Լաւագոյն դէպքում, ուրեմն, ինչ «ազգային հարցի լուծմանն» է վերաբերում (Ռուսիոյ սահմաններում), ռուս բոլշեւիկները քայլել են իրենց նախորդ ընկերվարական–ժողովրդավար կառավարութեան հետքով միայն:

Եւ յետոյ մոռնալու չէ մի կարեւոր պարագայ, ինչ յատկապէս Անդրկովկասին եւ Հայաստանին է վերաբերում: Բոլշեւիզմը այդտեղ յաջողդն է ոչ թէ միապետական–ցարական կարգի, ոչ իսկ Ռուսիոյ դաշնակցային (ֆեդերատիվ) երկրամասերի, այլ՝ անկախացած, ինքնուրոյնացած երկրամասերի: Ազգային անկախութիւնն եւ ինքնուրոյնութիւնն է ահա, որ Անդրկովկասում եւ Հայաստանում փոխարինուել է Խորհրդային դաշնակցային դրութեամբ:

Բայց այդ եւս մի կողմը թողնենք: Ընդունինք մի բոպէ, թէ, օրինակ, այսօրուան Հայաստանը այն է, ինչ որ ազգը ուզում է, թէ՝ մինչեւ իսկ սահմանների ընդարձակման խնդիր չկայ մէջտեղ: Բայց չէ՞ որ 600 հազարից աւելի հայութիւն է մնում մեր երկրից դուրս: Հապա նրա ազգային մշակութային ինքնավարութեան խնդի՞րը:

Հայ ընթերցողները դիտեն, օրինակ, որ Հայաստանի թուրքերը, ռուսները եւ այլ ուրիշ իրենց դպրոցները (մայրենի լեզուով), որ՝ նրանց ծախքերը գոյւում են Հայաստանի պետական դանձարանից: Շատ լաւ:

Մօտաւորապէս նոյն ձեւով են պահւում նաեւ Վրաստանի եւ Ատրբէջանի ազգային փոքրամասնութեանց դպրոցները: Մօտաւորապէս ենք ասում, որովհետեւ վերջիններիս դրութիւնը այդտեղ աւելի աննպաստ է, քան Հայաստանում: Մանաւանդ խոշոր կենդրոններում — Թիֆլիս եւ Բագու: Հարկաւ այդտեղ կան ազգային դպրոցներ՝ հայերի, ռուսների եւ ուրիշ փոքրամասնութեանց համար: Բայց նախ՝ ոչ բոլոր հայ երեխաները յաճախում են, օրինակ Թիֆլիսում, հայկական դպրոցներ: